

ու խնամքով, միւս կողմէն Կոլոտ Ամրտուի հա-
րուստ Մատենադարանին կարեւորագոյն եւ Պոլսոյ
մէջ չգտնուած ձեռագիրները Պոլիս բերել տուաւ:
Ընդօրինակել տալէ ետքը զանոնք վերագարծուց
Ամրտու:¹ Պոլիս կերպարանափոխ եղաւ. գրական
շարժում մը տիրեց հոն եւ տեւեց իր դպրոցով:
Եկեղեցւոյ բեմը ոգեւորեցին Կոլոտի աշակերտ-
ները:² Տպարաններ հաստատուեցան իր օրով, եւ
100 հատորի մօտ նախնեաց գործերէն այլեւայլ
հատորներ լոյս տեսան իր քաջալերութեամբ եւ իր
հսկողութեան տակ եւ այն հատորներուն Յիշա-
տակարաններէն շատերը Կոլոտի գրչէն ելած են
անշուշտ:³ Զենոբ Գլակը առաջին անգամ Կոլոտ
հրատարակեց դէպ ի Մշու Ս. Կարապետ իր եւ
Շղթայակրին սէրն ու երախտագիտութիւնն ար-
տայայտելու համար: Այդ հատորը, զոր արժե-
քաւոր յիշատակարանով մ'օժտած է Կոլոտ,

1 Նալեան, Գանձարան ծանոցման հատոր Գ.էջ 272:

2 Հայ ազգին բարեացապարտ եւ առաջին տպագրիչ-
ներէն Մարգուանցի Գրիգոր դպիր, որ իբր աշակերտ
Ամրտուի Սարգիս Վարդապետին նոյն դպրոցէն կը համա-
րուի, իր Յայտմաւորքին մէջ, որուն ճակատը 1730 Մարտ 2
թուականը կը կրէ — երկու սիւնակ յիշատակարան մը
նուիրած է Կոլոտի եւ Շղթայակրի արգիւնաւոր գործու-
նէութեան. որուն քանի մը տողերը մեծ արժէք ունին
իբր ականատեսի գնահատում. «Յովհաննէս Վարդապետն
ժողովեալ զաշակերտս բազումս ստացաւ ի պարծանս
մերոյ ազգիս ասորս-աշտիւն վարդապետս է- զտարնդէն. զի
ժ. յարմարն խղճութիւն անկէ ոգէն մեր. այլ տեսեալ
աշակերտք սոցա (= Կոլոտի եւ Շղթայակրի) զվարս եւ
զգնացս վարդապետացն այնոցիկ՝ նմանողք եղիցին գործոց
հոգեւոր հարցն իւրեանց, որ է- կան այժմ եւ տածեն
զազգս մեր ի խոր խաղաղութիւն մին յծրուսաղէմ եւ
միւսն ասոր»

3 Պիտի աշխատինք «Նալեան» հատորին մէջ դնել
կարելի եղածին չափ լման ցանկ մը այն գրքերուն, որոնք
տպագրուած են Կոլոտի ատեն: